Լողավազանները հրդեհից հետո

Նախազգուշական քայլեր արեք: Ապահով եղեք: Պահպանեք ձեր առողջությունը:



Հետևյալ ուղղորդումներն առաջարկվում են՝ ծխով և մոխրով պատած լողազավանները վերականգնելու համար: Կախված այն հանգամանքից, թե որքան մոխիր, մուր կամ այրված բեկորներ կան ձեր լողավազանում, կարող է անհրաժեշտ լինել, որ ձեր լողավազանը ստուգի և գնահատի մասնագետը:

Մի օգտագործեք լողավազանը, քանի դեռ չեն արվել հետևյալ քայլերը.


- Դատարկեք լողավազանի աղբի զամբյուղները և լողավազանի ցանցով մաքրեք ջրի մակերեսը՝ լողացող թափոնները հեռացնելու համար:
- Խոզանակով մաքրեք լողավազանի կողքերը և հատակը՝ կեղտը թուլացնելու համար. այնուհետև փոշեկուլով մաքրեք լողավազանը:
- Հակառակ հոսքով ջրով լվացեք և մաքրեք զտիչը (զտիչները): Թափոնները և կեղտաջրերը բաց թողեք միայն **քաղաքային սանիտարական կոյուղու մեջ**: Եթե միացված է սեպտիկ բաքի համակարգին, ջրի հոսքն ուղղեք դեպի ջուր կլանող մակերես, օրինակ՝ մանրախճով պատած, խոտածածկ կամ բաց տարածություն, որպեսզի այն ներծծվի առանց քայքայելու:

  Օրենքով արգելված է ջուրը բաց թողնել անձրևաջրերի հեռացման համակարգերի (քայլուղիների, մեքենաների ուղիների, փողոցների վրայի, անձրևաջրերի խողովակների) և առուների մեջ:
- Ստուգեք ջրածնային ցուցիչը (pH) և դրա մակարդակը հասցրեք **7.2 - 8.0-ի**:
- Ստուգեք մաքուր քլորի մակարդակը և այն դարձրեք նվազագույնը **2.0 ppm (մաս՝ միլիոնում)՝ լողավազանում, և 3.0 ppm՝ տաք ջրի ավազանում**:
- Համոզվեք, որ շրջանառության համակարգն աշխատում է պատշաճ կերպով՝ ստուգելով զտիչի ճնշումը և/կամ հոսքի չափիչը:
- Լողավազանը նորից օգտագործեք, միայն եթե pH-ի մակարդակը գտնվում է **7.2-ի** և **8.0-ի** միջև, և մաքուր քլորի մակարդակը **լողավազանում առնվազն 2.0 ppm է, իսկ տաք ջրի ավազանում՝ 3.0 ppm:**

ԼՈՂԱՎԱԶԱՆԻ ՑԱՆԿԱՊԱՏ

Հրդեհը կարող է վնասել լողավազանների և տաք ջրի ավազանների ծածկերը: Խեղդվելը, վնասվածքները կամ այլ վտանգները կանխելու համար լողավազանները և տաք ջրի ավազանները պետք է փակվեն պաշտպանիչ ցանկապատերով:

- Պարիսպը պետք է լինի գետնից **առնվազն 60 մատնաչափ (inch՝ «ինչ»)** բարձր:
- Բացվածքները չպետք է գերազանցեն **4 մատնաչափը**, որպեսզի կանխվի փոքր երեխաների մուտքը:
- Դարպասները և մուտքի դռները պետք է լինեն ինքնուրույն փակվող և ինքնուրույն կողպվող:




Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք կապ հաստատել Շրջակա Միջավայրի և Առողջության Բաժնի **«Հանգստի համար օգտագործվող ջրերի» ծրագրի հետ՝ (626) 430-5360** կամ **rhealth@ph.lacounty.gov**:

(Armenian)

County of Los Angeles Public Health

Լողավազանների և տաք ջրի ավազանների վերանորոգումը

Հրդեհը կարող է վնասել լողավազանի կամ տաք ջրի ավազանի կառուցվածքային մասերը՝ ներառյալ պատերը, տախտակամածը, սարքավորումները և ծածկերը: Խնդրում ենք հետևել ստորև նշված հրահանգներին, երբ հրդեհից հետո վերանորոգում կամ վերակառուցում եք ձեր լողավազանը: Խորհուրդ չի տրվում ցամաքեցնել լողավազանը, եթե հողն անկայուն է կամ բարձր ստորերկրյա ջրեր կան, քանի որ սրանք կարող են առաջացնել տեղաշարժ, ճաքեր կամ լողավազանի այլ վնասներ:



Բնակելի վայրերի լողավազաններ և տաք ջրի ավազաններ

Թափոնների հեռացման նահանգային ծրագիրը չի հեռացնում լողավազանի վերանորոգումից մնացած նյութերը: Թույլտվություններ և քանդման համար անհրաժեշտ նյութեր ձեռք բերելու, ինչպես նաև քանդելու համար պատասխանատու է լողավազանի սեփականատերը:


Լողավազանի կառույցի և/կամ սարքավորումների վերանորոգման պահանջների և հրահանգների համար կապ հաստատեք ձեր տարածքային **Շինարարության և Անվտանգության բաժնի** հետ:

Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված (unincorporated) տարածքների համար կապ հաստատեք **Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Աշխատանքների Վարչության՝ Շինարարության և Անվտանգության բաժնի հետ (626) 458-5100 հեռախոսահամարով**:

Լողավազանի դատարկում

Եթե պետք է դատարկել լողավազանը, չընդգրկված (unincorporated) տարածքների բնակիչները կարող են դա անել գոյություն ունեցող 3 մատնաչափ (inch) հաստությամբ p-աձև հոսակի (տրապ, p-trap) միջոցով, որը պետք է տեղադրվի Շինարարության և Անվտանգության բաժնի թույլտվությամբ: Ընդգրկված (incorporated) քաղաքների բնակիչները պետք է դիմեն Շինարարության և Անվտանգության իրենց տարածքային բաժին՝ ավազանի ջուրը դատարկելու պահանջներն իմանալու համար: Աղի ջրով ավազանների սեփականատերերին խորհուրդ է տրվում կապվել իրենց քաղաքապետարանի հետ՝ պարզելու, թե օրենքով որտեղ կարելի է դատարկել լողավազանի ջուրը:

Հանրային լողավազաններ և տաք ջրի ավազաններ



Հանրային բոլոր լողավազաններն ու տաք ջրի ավազանները, որոնք գտնվում են հյուրանոցներում/մոթելներում, վարձակալվող բազմաբնակարան շենքերում, սեփական հարկաբաժիններով շենքերում, դպրոցներում, առողջապահական ակումբներում, քաղաքային զբոսայգիներում, շարժական տների այգիներում, հանգստյան տներում, կազմակերպություններում, ջրային թեմատիկ այգիներում և բժշկական հաստատություններում, թույլատրված են Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության կողմից:

Կապ հաստատեք **«Հանգստի համար օգտագործվող ջրերի»** ծրագրի հետ՝ լողավազանների և/կամ սարքավորումների ցանկացած վերանորոգման վերաբերյալ պահանջներն իմանալու և շինարարական նախագծերը ներկայացնելու համար:

Տախտակամածի մաքրումը: Մաքրեք լողավազանի տախտակամածը և թափեք բեկորները կոշտ թափոնների հետ: Մի ջրեք տախտակամածը ջրի շիթով և մի օգտագործեք փչելով տերևները հավաքող սարք, քանի որ թափոնները կարող են լցվել անձրևաջրերի խողովակները կամ բարձրանալ օդ: Նախ տախտակամածը թեթևակի ցողեք ջրով, որպեսզի նվազագույնի հասցնեք օդի մեջ մտնող փոշու և մոխրի քանակը: Այնուհետև օգտագործեք կոշտ խոզանակ կամ ավել, որպեսզի ավելք և աղբը լցնեք աղբի տոպրակի մեջ: Տախտակամածը մաքրելու համար կարելի է օգտագործել նաև թաց լաթ և դույլ:

Մոծակների բազմացումը



Չխնամված լողավազանում և տաք ջրի ավազանում ջուրը լճանում է, ինչը մոծակների համար այն դարձնում է ձվադրելու վայր և կարող է ընդամենը մի քանի շաբաթվա ընթացքում **հազարավոր մոծակներ** առաջացնել: Մոծակները կարող են տարածել լուրջ հիվանդություններ, ինչպիսիք են Արևմտյան Նեղոսի վիրուսը և Զիկա վիրուսը:

Կարևոր է թույլ չտալ, որ ստեղծվեն մոծակների բազմացման պայմաններ, որպեսզի կանգնեցվի հիվանդությունների տարածումը: **Հիշեցում.** «Կալիֆորնիայի առողջապահության և անվտանգության» օրենսգրքի համաձայն՝ տների սեփականատերերը պատասխանատու են իրենց տարածքում մոծակների բազմացումը կանխելու և վերացնելու համար:

Անհրաժեշտ չէ լողավազանը դատարկել: Փոխարենը կիրառեք հետևյալ կանխարգելիչ միջոցները՝ չօգտագործվող լողավազաններում կամ տաք ջրի ավազաններում մոծակների բազմացումը վերահսկելու համար.

1. **Մոծակների խայծ:** Բլիթի տեսքով պինդ իր է, որը դրվում է լողավազանի ջրի մեջ՝ մոծակների թրթուրները ոչնչացնելու համար, և այն կարելի է գնել տեխնիկայի կամ այգեգործական ցանկացած խանութից:

2. **Մոծակի ձուկ:** Փոքրիկ ձուկ է, որն ուտում է մոծակների թրթուրներ: Եթե օգտագործվում է մոծակի ձուկ, ջրի մեջ չպետք է լինեն և չպետք է ավելացվեն քիմիական նյութեր (օրինակ՝ քլոր):

Մոծակի ձկան, խնամքի և հավելյալ օժանդակության համար խնդրում ենք կապ հաստատել ձեր տարածքային **Մոծակների նվազեցման բաժնի հետ (Mosquito Abatement District):**

Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք կապ հաստատել Շրջակա Միջավայրի և Առողջության Բաժնի **«Հանգստի համար օգտագործվող ջրերի» ծրագրի հետ՝ (626) 430-5360** կամ **rhealth@ph.lacounty.gov**:

[3/12/25] (Armenian)

County of Los Angeles Public Health